

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային համակարգի գործունեության կանոնները և կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային մարմնի և հավատարմագրված կամ հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այսուհետ՝ համապատասխանության գնահատման մարմիններ) հարաբերությունները:

2. Սույն օրենքը կարգավորում է փորձարկում, կալիբրավորում, տեխնիկական հսկողություն, սերտիֆիկացում և համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման այլ մարմինների հավատարմագրման գործընթացը՝ անկախ հավատարմագրման և համապատասխանության գնահատման պարտադիր կամ կամավոր հիմքերից:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

հավատարմագրում՝ համապատասխանության հավաստում սույն օրենքով սահմանված կարգով համապատասխանության գնահատման հատուկ գործունեություն իրականացնելու նպատակով, հիմնավորելով, որ համապատասխանության գնահատման մարմինը կատարում է ներդաշնակեցված ստանդարտներով սահմանված պահանջները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ պահանջները, ներառելով դրանք (այդպիսիները) համապատասխան ոլորտների հավատարմագրման համակարգերում,

հավատարմագրման ազգային մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը միակ մարմինն է սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով հավատարմագրման ապահովման ոլորտում,

հավատարմագրման վկայագիր՝ պաշտոնական փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ, որը հավաստում է հավատարմագրումը որոշակի ոլորտում,

հավատարմագրման ոլորտ՝ համապատասխանության գնահատման որոշակի ծառայություններ, որոնց համար հավատարմագրման հարցում է արվել կամ արդեն իրականացվել է հավատարմագրումը,

հավատարմագրման նշան՝ հավատարմագրման ազգային մարմնի կողմից համապատասխանության գնահատման մարմնին տրված նշան՝ հավատարմագրված լինելը ցուցադրելու նպատակով օգտագործելու համար,

բողոքարկում՝ համապատասխանության գնահատման մարմնի հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրման վերաբերյալ կայացրած որևէ անբարենպաստ որոշման վերանայման պահանջ: Որոշումները ներառում են՝ դիմումի ընդունման մերժումը, գնահատում իրականացնելու մերժումը, ուղղիչ գործողություններ իրականացնելու պահանջը, հավատարմագրման ոլորտի փոփոխությունների կատարումը, հավատարմագրումը մերժելու, կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումների ընդունումը, ինչպես նաև այլ գործողություն, որը խոչընդոտում է հավատարմագրմանը,

համապատասխանության գնահատում՝ գործընթաց, որով հավաստվում է արտադրանքին, գործընթացին, համակարգին, անձին կամ մարմնին ներկայացվող պահանջների իրականացումը,

համապատասխանության գնահատման մարմին՝ մարմին, որն իրականացնում է համապատասխանության գնահատման գործունեություն, ներառելով կալիբրավորումը, փորձարկումը, սերտիֆիկացումը և տեխնիկական հսկողությունը,

հավատարմագրմանը հավակնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ համապատասխանության գնահատման մարմին, որը հավատարմագրման նպատակով դիմել է հավատարմագրման ազգային մարմնին,

հավատարմագրման ընդլայնում՝ հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթաց, **շահագրգիռ կողմեր՝** հավատարմագրմամբ ուղղակիորեն կամ անուղղակի շահագրգիռ կողմեր:

Ուղղակիորեն շահագրգիռ են համարվում նրանք, ովքեր հավատարմագրվում են,

անուղղակի շահագրգիռ են համարվում նրանք, ովքեր օգտվում են հավատարմագրված համապատասխանության գնահատման ծառայություններից կամ հիմնվում են դրանց վրա,

հավասարի սկզբունքներով փորձագիտական գնահատում՝ հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների անդամ հավատարմագրման ազգային մարմինների կողմից սահմանված պահանջներին համապատասխան հավատարմագրման ազգային մարմնի գնահատման գործընթաց,

հավատարմագրման կրճատում՝ հավատարմագրման ոլորտի որոշակի մասի դադարեցման գործընթաց,

հավատարմագրման կասեցում՝ հավատարմագրման ոլորտի ժամանակավորապես լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչման գործընթաց,

հավատարմագրման դադարեցում՝ հավատարմագրումն ամբողջությամբ դադարեցման գործընթաց,

փորձարկում՝ ընթացակարգի համաձայն համապատասխանության գնահատման օբյեկտի մեկ կամ մի քանի բնութագրերի որոշում,

կալիբրավորում՝ գործողություն, որը հատուկ պայմաններում, առաջին հերթին, հիմնում է կապ էտալոնների միջոցով ստացված չափման անորոշություններով մեծության

արժեքների և չափման անորոշություններով համապատասխան ցուցմունքների միջև, երկրորդ հերթին, օգտագործում է այս տեղեկությունը ցուցմունքից չափման արդյունք ստանալու նպատակով կապ հիմնելու համար,

տեխնիկական հսկողություն՝ հատուկ պահանջների կամ մասնագիտական դատողության հիման վրա արտադրանքի նախագծման, արտադրանքի պատրաստման գործընթացի կամ տեղադրման փորձաքննություն, որը որոշում է դրա համապատասխանությունը ընդհանուր պահանջներին,

սերտիֆիկացում՝ արտադրանքի, գործընթացի, համակարգի կամ անձի համապատասխանության հավաստում երրորդ կողմի միջոցով,

գնահատող՝ ֆիզիկական անձ, նշանակված հավատարմագրման ազգային մարմնի կողմից՝ միայնակ կամ գնահատողների խմբի կազմում՝ համապատասխանության գնահատման մարմնի գնահատում իրականացնելու համար,

փորձագետ՝ որոշակի գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ՝ նշանակված հավատարմագրման ազգային մարմնի կողմից, գնահատման ենթակա հավատարմագրման ոլորտում փորձաքննություն իրականացնելու համար,

պարբերական գնահատում՝ գործունեության տեսակների լրակազմ, բացառությամբ կրկնական գնահատման, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմնի կողմից հավատարմագրման պահանջների շարունակական կատարումը հսկելու համար,

համապատասխանության սերտիֆիկատ՝ համապատասխանության գնահատման մարմնի կողմից տրված փաստաթուղթ, որը հավաստում է արտադրանքի, կառավարման համակարգերի, ֆիզիկական անձանց համապատասխանությունը սահմանված պահանջներին:

Հոդված 3. Հավատարմագրման բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետության հավատարմագրման բնագավառում հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, այլ իրավական ակտերով և միջազգային պայմանագրերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա գործում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 4. Հավատարմագրման նպատակները

Հավատարմագրման նպատակներն են.

1. Պաշտոնապես հավաստել համապատասխանության գնահատման մարմնի՝ համապատասխանության գնահատման որոշակի տեսակի ծառայություններ մատուցելու իրավասությունը:

2. Նպաստել Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների և ծառայությունների կատարելագործմանը, բարձրացնել սպառողների վստահությունը համապատասխանության գնահատման գործունեության արդյունքների նկատմամբ:

3. Ապահովել համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումը՝ համապատասխանեցնելով ընթացակարգերի ներդաշնակումը միջազգային հավատարմագրման համակարգերի ընթացակարգերին՝ բացառելով առևտրում տեխնիկական խոչընդոտները:

4. Ստեղծել պայմաններ Հավատարմագրման ազգային մարմնի և նրա կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների միջազգային ճանաչման համար:

Հոդված 5. Հավատարմագրման հիմնական սկզբունքները

1. Հավատարմագրումը ծառայություն է, որը ներկայացնում է հանրային շահերը:

2. Հավատարմագրումը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1) օրինականություն,

2) կամավորություն, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ պահանջ չի սահմանվում,

3) շահագրգիռ բոլոր կողմերի համար հավասար իրավունքներ,

4) անկախություն,

5) անկողմնակալություն,

6) թափանցիկություն,

7) արհեստավարժություն,

8) հավատարմագրման գործընթացում ձեռք բերված տեղեկատվության գաղտնիություն,

9) միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակեցված հավատարմագրման պահանջների կիրառում:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 6. Հավատարմագրման ազգային համակարգի կառուցվածքը

1. Հավատարմագրման ազգային համակարգը կազմված է միմյանց հետ համագործակցող հետևյալ մասնակիցներից՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին,

2) հավատարմագրման ազգային մարմին, ներառյալ՝ հավատարմագրման խորհուրդը և հավատարմագրման տեխնիկական կոմիտեները,

3) համապատասխանության գնահատման մարմիններ:

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը՝

1) մշակում է հավատարմագրման և համապատասխանության գնահատման բնագավառի պետական քաղաքականությունը,

2) խրախուսում է հավատարմագրումը համապատասխանության գնահատման ոլորտներում՝ ընդունելով հավատարմագրումը որպես հիմնական գործիք համապատասխանության գնահատման մարմինների գնահատման գործընթացում,

3) իրականացնում է հավատարմագրման ազգային մարմնի գործունեության մոնիթորինգ՝ երաշխավորելով, որ սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի դրյուները պահպանվում են, և ձեռնարկվում ուղղիչ գործողություններ՝ հավասարի սկզբունքներով իրականացված փորձագիտական գնահատման արդյունքների հիման վրա,

4) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է վարչական վարույթ հավատարմագրման բնագավառում,

5) սահմանում է օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների ձանաչման կարգը,

6) իրականացնում է այլ գործառնություններ՝ սույն օրենքի և այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության, տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերին համապատասխան:

Հոդված 8. Հավատարմագրման ազգային մարմին

1. Հավատարմագրման ազգային մարմինը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

2. Հավատարմագրման ազգային մարմնի անվանումն է “Հավատարմագրման ազգային մարմին”՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է:

3. Հավատարմագրման ազգային մարմինը Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրման ծառայություններ մատուցող միակ մարմինն է:

4. Հավատարմագրման ազգային մարմինը.

1) կառուցվածքով անկախ է իր կողմից գնահատվող համապատասխանության գնահատման մարմիններից ու առևտրային ձևերից և ապահովում է շահերի բախման բացառումը համապատասխանության գնահատման մարմինների հետ,

2) կառուցվածքով և գործունեությամբ ապահովում է իր գործողությունների օբյեկտիվությունը և անաչառությունը,

3) ապահովում է, որպեսզի հավատարմագրման վերաբերյալ յուրաքանչյուր որոշում կայացվի իրավասու անձանց կողմից, որոնք չեն մասնակցել համապատասխանության գնահատման գործընթացին,

- 4) ունի համապատասխան ընթացակարգեր՝ ստացված տեղեկատվության գաղտնիությունը ապահովելու համար,
- 5) սահմանում է համապատասխանության գնահատման գործունեության այն տեսակը, որոնք իրավասու է գնահատելու՝ անհրաժեշտության դեպքում հղում կատարելով համապատասխան օրենքներին, այլ իրավական ակտերին և ստանդարտներին,
- 6) մշակում է արդյունավետ կառավարման և ներքին ստուգման իրականացման համապատասխան ընթացակարգեր,
- 7) իր պարտականությունների պատշաճ կատարման համար ունի բավարար թվով իրավասու աշխատակիցներ,
- 8) փաստաթղթերով հիմնավորում է գնահատման և համապատասխանության հավաստման որակի վրա ազդեցություն ունեցող աշխատակիցների պարտականությունները և իրավունքները,
- 9) մշակում, կիրառում և պահպանում է աշխատակիցների կողմից իրականացվող աշխատանքների և իրավասության գնահատման ընթացակարգերը,
- 10) հավաստում է, որ համապատասխանության գնահատումներն իրականացվում են պատշաճ ձևով՝ խուսափելով ավելորդ ծանրաբեռնվածությունից՝ հաշվի առնելով կազմակերպության չափը, գործունեության ոլորտը, կառուցվածքը, արտադրանքի տեխնոլոգիական գործընթացի բարդության աստիճանը, արտադրության ծավալը և սերիական բնույթը,
- 11) հրատարակում է աուդիտի տարեկան հաշվետվությունը՝ կազմված Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

Հոդված 9. Հավատարմագրման խորհուրդը

1. Հավատարմագրման խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) Հավատարմագրման ազգային մարմնի կառավարման բարձրագույն մարմինն է, որը կազմված է 7 անդամներից՝ չափազոր 4 պետական կառավարման մարմինների և 3 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից որոնք նշանակվում են 3 տարի ժամկետով:

2. Խորհրդի անհատական կազմը սահմանում է լիազորված պետական կառավարման մարմինը:

3. Հավատարմագրման ազգային մարմնի տնօրենը հանդիսանում է Խորհրդի քարտուղարը և չի կարող հանդես գալ որպես Խորհրդի նախագահ:

4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա են քվեարկության ծայնի իրավունք ունեցող Խորհրդի անդամների առնվազն 2/3 անդամ:

5. Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների կողմից:

6. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ:

7. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա գտնվող անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

8. Խորհուրդը՝

- 1) տեխնիկական կոմիտեների արձանագրությունների հիման վրա հավատարմագրման ազգային մարմնի ղեկավարի ներկայացմամբ կայացնում է հավատարմագրման վերաբերյալ որոշում,
- 2) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման ոլորտի զարգացման ռազմավարությունը՝ նպատակ ունենալով զարգացնել այն՝ եվրոպական միության և միջազգային լավագույն փորձին ներդաշնակ, սահմանում է հավատարմագրման բնագավառում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարությունը,
- 3) քննարկում, հաստատում և հրապարակում է հավատարմագրման ազգային մարմնի գործունեության, այդ թվում՝ ֆինանսական տարեկան հաշվետվությունը,
- 4) քննարկում և հաստատում է հավատարմագրման ազգային մարմնի տարեկան ծրագիրը և տարեկան բյուջեն,
- 5) ընտրում է հավատարմագրման ազգային մարմնի աուդիտն իրականացնող մարմնին,
- 6) հավատարմագրման ազգային մարմնի գործադիր մարմնի ներկայացմամբ հաստատում է հավատարմագրման տեխնիկական կոմիտեների գործունեության կարգը,
- 7) հաստատում է հավատարմագրման վկայագրերի և համապատասխանության սերտիֆիկատների ձևերը,
- 8) սահմանում է հավատարմագրման նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը,
- 9) հավատարմագրման ազգային մարմնին հավատարմագրման ոլորտում քաղաքականության իրականացման խնդիրների հետ կապված խորհրդատվություն է տրամադրում,
- 10) հաստատում է հավատարմագրման գործընթացում ընդգրկվող փորձագետների (ներառյալ՝ օտարերկրյա փորձագետների և գնահատողների) ցանկը,
- 11) հավատարմագրման ազգային մարմնի գործունեության հետ կապված բոլորքները քննարկելու համար ստեղծում է բոլորքարկման հանձնաժողով,
- 12) քննարկում և համաձայնություն է տալիս ներկայացված օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների ճանաչման վերաբերյալ,
- 13) համակարգում է Հայաստանի Հանրապետությունում ազգային, միջազգային և տարածաշրջանային հավատարմագրման աշխատանքները,
- 14) օրենքով սահմանված կարգով հաստատում է հավատարմագրման ազգային մարմնի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը,

15) իրականացնում է Հավատարմագրման ազգային մարմնի կանոնադրությամբ խորհրդին վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 10. Հավատարմագրման ազգային մարմնի գործադիր մարմինը

1. Հավատարմագրման ազգային մարմնի գործադիր մարմինը իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) ապահովում է հավատարմագրման գործընթացի և հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների պարբերական գնահատման իրականացումը,

2) հաստատում է հավատարմագրման տեխնիկական կոմիտեների անհատական կազմը,

3) ապահովում է հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների և հավատարմագրման գործընթացում ընդգրկված գնահատողների ու փորձագետների գրանցամատյանների վարումը,

4) կազմակերպում է հավատարմագրման գործընթացում ներգրավված աշխատակիցների, գնահատողների և փորձագետների վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև հավատարմագրման վերաբերյալ գիտաժողովներ և սեմինարներ,

5) հրապարակում և տրամադրում է տեղեկատվություն հավատարմագրմանն առնչվող խնդիրների վերաբերյալ,

6) հավատարմագրման բնագավառում տարածաշրջանային և միջազգային համագործակցության շրջանակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը և մասնակցում է հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների աշխատանքներին,

7) կազմակերպում է համապատասխանության սերտիֆիկատների բլանկների տպագրությունը և դրանք համապատասխանության գնահատման մարմիններին տրամադրումն ու հաշվառումը,

8) իր իրավասության սահմաններում կնքում է համագործակցության և համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման երկկողման և բազմակողմ փոխադարձ ճանաչման համաձայնագրեր,

9) հավատարմագրման բնագավառում իրականացնում է նաև այլ գործառնություններ՝ սույն օրենքին և այլ իրավական ակտերին, Հայաստանի Հանրապետության, տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերին համապատասխան:

Հոդված 11. Հավատարմագրման տեխնիկական կոմիտեներ

1. Հավատարմագրման տեխնիկական կոմիտեները ստեղծվում են հավատարմագրման ազգային մարմնի գործադիր մարմնի կողմից:

2. Հավատարմագրման տեխնիկական կոմիտեների հիմնական գործառնություններն են՝

1) ուսումնասիրել համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման հետ կապված փաստաթղթերը,

- 2) համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման փաստաթղթերի (գնահատումների) ուսումնասիրության արդյունքում խորհրդին ներկայացնել առաջարկություն հավատարմագրման վերաբերյալ:

Հոդված 12. Համապատասխանության գնահատման մարմինները

1. Հավատարմագրմանը կարող են դիմել հետևյալ համապատասխանության գնահատման մարմինները՝

- 1) փորձարկման և կալիբրավորման լաբորատորիաները,
- 2) արտադրանքի սերտիֆիկացման մարմինները,
- 3) կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները,
- 4) ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմինները,
- 5) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինները,
- 6) համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման այլ մարմինները:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված համապատասխանության գնահատման յուրաքանչյուր մարմին Հավատարմագրման ազգային մարմնից կարող է ստանալ տեղեկատվություն հավատարմագրման գործընթացի վերաբերյալ:

3. Համապատասխանության գնահատման մարմինները համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման հայտերը ընդունում են էլեկտրոնային համակարգի միջոցով:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հոդված 13. Հավատարմագրման գործընթացը

1. Հավատարմագրման ազգային մարմնի կողմից համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

2. Հավատարմագրման գործընթացը իրականացվում է համաձայն միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի պահանջներին:

3. Միջազգային ճանաչում ունեցող օտարերկրյա հավատարմագրման մարմինների կողմից տրված հավատարմագրման վկայագրերի միակողմ ճանաչման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 14. Համապատասխանության գնահատման մարմինների իրավունքները

1. Համապատասխանության գնահատման մարմինները՝
 - 1) օգտագործում են Հավատարմագրման ազգային մարմնի հավատարմագրման նշանը՝ սույն օրենքով սահմանված կարգով հավատարմագրված լինելու դեպքում,
 - 2) դիմում են Հավատարմագրման ազգային մարմնին՝ ընդլայնելու կամ կրճատելու, ինչպես նաև կասեցնելու կամ դադարեցնելու հավատարմագրումը,
 - 3) բողոքարկում են հավատարմագրման գործընթացը և հավատարմագրման մասին որոշումները:

Հոդված 15. Համապատասխանության գնահատման մարմինների պարտականությունները

1. Համապատասխանության գնահատման մարմինները պարտավոր են.
 - 1) պատշաճ կերպով պահպանել հավատարմագրման կանոնները, ընթացակարգերը և Հավատարմագրման ազգային մարմնի հետ կնքված պայմանագրով ամրագրված պարտավորությունները,
 - 2) Հավատարմագրման ազգային մարմնի և համապատասխանության գնահատման մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա կատարել վճարումներ հավատարմագրման ծառայությունների, գնահատումների համար,
 - 3) մշտապես համապատասխանել այն ստանդարտների, նորմատիվ փաստաթղթերի և իրավական ակտերի պահանջներին, որոնց համաձայն նրանք հավատարմագրվել են,
 - 4) վկայակոչել հավատարմագրումը և կիրառել հավատարմագրման նշանը միայն հավատարմագրված ոլորտին համապատասխան,
 - 5) հավատարմագրման դադարեցման դեպքում Հավատարմագրման ազգային մարմնին վերադարձնել հավատարմագրման վկայագրի բնօրինակը,
 - 6) համագործակցել Հավատարմագրման ազգային մարմնի հետ՝ հավատարմագրված համապատասխանության գնահատման գործունեության վերաբերյալ բողոքներն ուսումնասիրելու նպատակով:

Հոդված 16. Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում

1. Հավատարմագրման ազգային մարմինը տրամադրում է շահագրգիռ կողմերին հավատարմագրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն:
2. Հավատարմագրման կանոններն ու ընթացակարգերը, ինչպես նաև հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների համար նախատեսված գրանցամատյանները ենթակա են հրապարակման Հավատարմագրման ազգային մարմնի կողմից:

Հոդված 17. Հավատարմագրման նշանը

1. Հավատարմագրման նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը սահմանում է խորհուրդը:
2. Արգելվում է չհավատարմագրված լինելու դեպքում համապատասխանության գնահատման մարմինների կողմից հավատարմագրման նշանի կիրառումը:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդված 18. Հավատարմագրման ազգային մարմնի անդամակցությունը հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին

1. Հավատարմագրման ազգային մարմինը կարող է անդամակցել, համագործակցել հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին, մասնակցել նրանց գործունեությանը և համաձայնագրերի շնորհիվ ձեռք բերել հավատարմագրման վկայագրերի ճանաչում:

2. Հավատարմագրման ազգային մարմնի կողմից չճանաչված համապատասխանության գնահատման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում արգելվում է:

3. Հավատարմագրման ազգային մարմինը կարող է դիմում ներկայացնել հավատարմագրման կազմակերպություններին անդամակցության կամ դրա կարգավիճակի փոփոխության վերաբերյալ:

4. Հավատարմագրման ազգային մարմինը հավատարմագրման վկայագրերի ու համապատասխանության գնահատման արդյունքների ճանաչման համար դիմում է հավատարմագրման կազմակերպությունների բազմակողմ համաձայնագրեր ստորագրող կողմ դառնալու համար, ինչն իր հերթին ենթադրում է հավասարի սկզբունքներով փորձագիտական գնահատում: Նման փորձագիտական գնահատումը իրականացվում է հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված ընթացակարգով:

Հոդված 19. Փոխադարձ համագործակցություն Հավատարմագրման ազգային մարմնի և օտարերկրյա հավատարմագրման մարմինների միջև

1. Հավատարմագրման ազգային մարմինը կարող է կնքել փոխադարձ համագործակցության համաձայնագրեր հավատարմագրման օտարերկրյա մարմինների հետ:

2. Նման համաձայնագրերը կարող են ներառել Հավատարմագրման ազգային մարմնի և որևէ օտարերկրյա հավատարմագրման մարմնի հետ համատեղ համապատասխանության գնահատման մարմինների գնահատման և հավատարմագրման իրականացման մասին դրույթ:

Հոդված 20. Հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրման ծառայությունների մատուցումը օտարերկրյա մարմիններին

Հավատարմագրման ազգային մարմինը կարող է հավատարմագրման ծառայություններ մատուցել օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմիններին՝ հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային պահանջներին համապատասխան:

Հոդված 21. Հավատարմագրման բնագավառում միջազգային համագործակցության մասին տեղեկատվության տրամադրում

1. Հավատարմագրման ազգային մարմինը տրամադրում է տեղեկատվություն փոխադարձ, բազմակողմ տարածաշրջանային և միջազգային համագործակցության, օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների ճանաչման, ինչպես նաև Հավատարմագրման ազգային մարմնի կողմից

հավատարմագրված օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման վկայագրերի վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվությունը ենթակա է հրապարակման Հավատարմագրման ազգային մարմնի կողմից:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 22. Հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսավորումը

1. Հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսավորման աղբյուրներն են.

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացված միջոցներ,
2) հավատարմագրման ծառայություններից, գնահատումներից և տարեկան անդամավճարներից ստացված միջոցներ,

3) հավատարմագրման վերաբերյալ հրատարակություններից ու դասընթացներից ստացված միջոցներ,

4) միջազգային ծրագրերին, նախագծերին և համաձայնագրերին մասնակցության արդյունքում ստացված միջոցներ,

5) օրենքով չարգելված այլ միջոցներ:

2. Մինչև երեք հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների անդամակցության ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

ԳԼՈՒԽ 7

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱՒՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 23. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

Սույն օրենքի պահանջների խախտումը առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 8

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 24. Անցումային դրույթներ

2004 թվականի հունիսի 19-ի “Համապատասխանության գնահատման մասին” ՀՕ-82-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված հավատարմագրման վկայագրերը գործում են մինչ դրանց գործողության ժամկետի ավարտը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեխնիկական կանոնակարգման մասին», «Հավատարմագրման մասին», «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ եզրակացությունը
	1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն	«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ մաս և 28-րդ հոդված «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի 23-րդ հոդված «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մաս:	1. «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ մասում և 28-րդ հոդվածում «օրենսդրությանը» և «օրենսդրությամբ» բառերը համապատասխանաբար անհրաժեշտ է փոխարինել «օրենքին» և «օրենքով» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 23-րդ հոդվածին: 2. «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել «Չափագիտության ազգային մարմնի գիտական պահապաններ» հասկացությունը, մասնավորապես պարզ չէ, թե ովքեր են հանդիսանում հիշյալ ինստիտուտի գիտական պահապանները և ինչ կարգով պետք է պահպանվեն ազգային էտալոնները: Բացի այդ	Կատարվել է համապատասխան փոփոխություն: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի 2-րդ հոդվածում տրվել է «գիտական պահապաններ» հասկացությունը:

			անհրաժեշտ է հստակեցնել «գիտական պահապաններ» հասկացության իրավական բովանդակությունը:	
2.	ՀՀ կառավարություն	«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի • 9-րդ հոդված, 8-րդ մաս, 1-ին կետ • 12-րդ հոդված • 17-րդ հոդված • 8-րդ գլուխ • 24-րդ հոդված	«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի. • 9-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետում «հիման վրա» բառերից հետո լրացնել «հավատարմագրման ազգային մարմնի ղեկավարի ներկայացմամբ» բառերը. • 12-րդ հոդվածում լրացնել նոր` 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «3. Համապատասխանության գնահատման մարմինները համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման հայտերը ընդունում են էլեկտրոնային համակարգի միջոցով:», 17-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը» բառերը փոխարինել «խորհուրդը» բառով: 8-րդ գլխում «ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ» բառերը հանել: 24-րդ հոդվածը հանել, եվ փոխել հաջորդ հոդվածի համարակալումը` ըստ	Փոփոխությունը պայմանավորված է հավատարմագրման գործընթացի ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունից: Նշված փոփոխությունը պայմանավորված է 2011թ. դեկտեմբերի 22-ի ՀՀ կառավարության նիստում ընդունված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու և ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հավելվածի 2.1 կետի պայանջներին նախագծի համապատասխանեցմամբ: Փոփոխությամբ վերացվում է հակասությունը նախագծի 9-րդ հոդվածի 8-րդ մասի 8-րդ կետի և 17-րդ հոդվածի 1-ին մասի միջև: Փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է հավատարմագրման բնականոն գործընթացին խոչընդոտող գործոնի

		«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի նախագծի. • 8-րդ հոդվածի 4-րդ կետ • 9-րդ հոդվածի 7-րդ կետ • 9-րդ հոդվածի 8-րդ կետ	հերթականության: • 8-րդ հոդվածի 4-րդ կետից հետո ավելացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ. «5) սահմանում է համապատասխանության գնահատման ընթացակարգերը,» • 9-րդ հոդվածի 7-րդ կետում «որոշում է ընդունում նշանակումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ» բառերի փոխարինել «որոշում է ընդունում նշանակումը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ» բառերը, • 9-րդ հոդվածի 8-րդ կետից հանել «և հաստատում գրանցամատյանի վարման կարգը» բառերը, • 9-րդ հոդվածի 10-րդ կետում «համապատասխանության գնահատման	վերացմամբ, այսինքն՝ բացակայում է հավատարմագրման գործընթացը մինչև սույն թվականի հուլիսի 1-ը հետաձգելու անհրաժեշտությունը: Բոլոր փոփոխությունները կատարվել են համապատասխան N768/2008 և N765/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջների: Համապատասխանության գնահատման ընթացակարգի սահմանումը ՀՀ կառավարության կողմից անհրաժեշտ է համապատասխանության գնահատման գործընթացի ճիշտ կազմակերպման համար, ինչպես նաև այն բխում է N768/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջներից: N768/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջ: Նման ընթացակարգ սահմանված չէ ոչ N768/2008 և ոչ էլ N765/2008 Եվրոպական կանոնակարգերի:
--	--	---	---	--

	• 9-րդ հոդվածի 10-րդ կետ • 9-րդ հոդվածի 11-րդ կետ • 20-րդ հոդված	նշանակված մարմինների բողոքարկման հանձնաժողովների» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հանձնաժողովի անհատական կազմը,» բառերով • 9-րդ հոդվածի 11-րդ կետում «և» բառից հետո գրել «նշանակված մարմինների կողմից տրվող», 20-րդ հոդվածի • 1-ին մասից հանել «, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ» բառերը: • 2-րդ մասում «կարգով» բառը փոխարինել «ընթացակարգով» բառով: • 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Համապատասխանության գնահատման մարմինը նշանակման համար համակարգող մարմնին ներկայացնում է հայտ, որին կցվում են համապատասխանության գնահատման գործունեության նկարագիրը, համապատասխանության գնահատման մեկ կամ մի քանի ընթացակարգերի անվանումները և մեկ կամ մի քանի արտադրանքի անվանումները, որոնց նկատմամբ համապատասխանության գնահատման մարմինը հայտարարում է իր տեխնիկական իրավասությունը, ինչպես նաև հավատարմագրման ազգային մարմնի կողմից	Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ: Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների կողմից ներկայացվող համապատասխանության սերտիֆիկատի ձևը պետք է տարբերվի համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներկայացվող համապատասխանության սերտիֆիկատի ձևից, որը հաստատվում է հավատարմագրման ազգային մարմնի կողմից: • N768/2008 Եվրոպական կանոնակարգի նախաբանի 41-րդ կետն է:
--	--	---	--

		• 23-րդ հոդված, 2-րդ մաս • 23-րդ հոդված, 4-րդ մաս • 25-րդ հոդվածի 3-րդ մաս	տրված հավատարմագրման վկայագիր»: • 5-րդ մասը հանել և փոխել համարակալումը՝ ըստ հաջորդականության: • 7-րդ (նախկին 8-րդ) մասում «որակի և տեխնիկական կանոնակարգման ազգային խորհուրդ» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հանձնաժողով» բառերով: • 8-րդ (նախկին 9-րդ) մասում «Որակի և տեխնիկական կանոնակարգման ազգային խորհրդի առաջարկի կամ Հավատարմագրման տեխնիկական կոմիտեների ուսումնասիրության արդյունքի հիման վրա» բառերը փոխարինել «Օրենքին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ընթացակարգերին չհամապատասխանելու դեպքում» բառերով: • 23-րդ հոդվածի 2-րդ մասում «համակարգող մարմնի» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման» բառերով: • 23-րդ հոդվածի 4-րդ մասում «Բողոքարկման հանձնաժողովների» բառերը փոխարինել «Համապատասխանության գնահատման նշանակված մարմնի համապատասխանության գնահատման բողոքարկման հանձնաժողովի» բառերով: • 25-րդ հոդվածի 3-րդ մասում «կիրառելիս» բառը փոխարինել «տրամադրելիս» բառով, • 25-րդ հոդվածում 3-րդ մասից հետո լրացնել նոր մաս հետևալ բովանդակությամբ. «4. Հայաստանի Հանրապետությունում համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանը կարող է կիրառել միայն արտադրողը կամ	Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ: Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ: N765/2008 Եվրոպական կանոնակարգի 30-րդ հոդվածն է:
--	--	--	---	---

		• 29-րդ հոդվածի 1-ին մաս	Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը:»: 29-րդ հոդվածի 1-ին մասում «կամ մասնակցությունը դրանց մշակմանը» բառերը հանել:	N765/2008 Եվրոպական կանոնակարգի 30-րդ հոդվածն է: N765/2008 Եվրոպական կանոնակարգի 34, 35-րդ հոդվածներն են:
3.	ՀՀ կառավարություն	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդված, 4-րդ մաս	11-րդ հոդվածի 4-րդ մասում «2/3 անդամ» բառերը փոխարինել «2/3-ը» բառերով:	Փոփոխությունը պայմանավորված է վրիպակը շտկելու անհրաժեշտությամբ:
4.	ՀՀ կառավարություն	«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ 29-րդ հոդված, 1-ին մաս	Օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասում «21-րդ» բառը փոխարինել «26-րդ» բառով:	Նշված փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է վրիպակը շտկելու նկատառումներից: